

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2022 թվականի  
դեկտեմբերի 7-ի կայացած գիտխորհրդի նիստի

Օրակարգում՝

1. 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները ֆակուլտետում: /զեկ.՝ ամբիոնի վարիչներ/
2. «ԵՊՀ Էքսպո-2023» -ի մարտին նախատեսվող միջոցառման աշխատանքների մասին: /զեկ.՝ Դ.Սարգսյան/
3. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի /2023թ. հունվարից մինչև օգոստոս/ ռազմավարական պլանի ստեղծման աշխատանքների մասին: /զեկ.՝ Ն.Ալավերդյան/
4. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում: /զեկ.՝ ամբիոնի վարիչներ/
5. Տպագրության երաշխավորման հարց.  
ա/ Է.Ա.Հարությունյան-«Մարդկային կեցության այլակերպումները»-մենագրություն  
բ/ Ն.Հ.Հարոյան-«Ինքնակարգավորման հիմունքներ» տեսագործական ուսումնական ձեռնարկ /մաս 1/  
գ/ Բ.Ա.Ղազարյան -«Կորստի և վշտի հոգեբանություն»-ուսումնական ձեռնարկ  
դ/ Հ.Մ.Ավանեսյան, Վ.Ռ.Պապոյան, Ա.Ս.Գալստյան, Դ.Յ.Սարգսյան-«Մասնագիտական ինքնորոշում և ընտրություն»-վերապատրաստման մոդուլ- /հոգեբանության գիտահետազոտական կենտրոն/
6. Փիլիսոփայության որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրիչների ձևավորման գործընթացի հարցը / զեկ.՝ Ս. Պետրոսյան/
7. Ասպիրանտական թեմաների և դեկավարների հաստատում:
8. Ընթացիկ հարցեր

1. Առաջին հարցի հետ կապված Ա. Բաղդասարյանը ևս մեկ անգամ հիշեցրեց առաջին կուրսեցիների գնահատման կարգի վերաբերյալ փոփոխությունները: Ամբիոնի վարիչները ներկայացրեցին քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները:

2. «ԵՊՀ Էքսպո-2023» -ի մարտին նախատեսվող միջոցառման աշխատանքների վերաբերյալ զեկուցեց Դ.Սարգսյանը: Ներկայացվեց միջոցառման նախապատրաստական աշխատանքների հաջորդականությունը: Առաջարկվեց ձևավորել աշխատանքային թիմ, որտեղ ներգրավված կլինեն բոլոր ամբիոններից պատասխանատուներ: ՈւԽ –ն և ՈԻԳ- ն ևս ներգրավված կլինեն տարվող աշխատանքներում: Ա. Բաղդասարյանը նշեց, որ երբ կազմակերպվում են հանդիպումներ աշակերտների հետ ֆակուլտետում, անհրաժեշտ է տեղեկացնել ԵՊՀ-ին:

3. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի /2023թ. հունվարից մինչև օգոստոս/ ռազմավարական պլանի ստեղծման աշխատանքների վերաբերյալ զեկուցեց Ն.Ալավերդյանը: Նշվեց, որ յուրաքանչյուր ամբիոն, լաբորատորիա պետք է ներկայացնի իր ռազմավարությունը: Ներկայացվեց ԵՊՀ – ի կողմից մշակված ռազմավարական մոդելը: Ժամկետ սահմանվեց, որի շրջանակներում ամբիոնները կներկայացնեն իրենց ռազմավարությունը:

4. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման վերաբերյալ զեկուցեցին ամբիոնի վարիչները: Բոլոր ասպիրանտները ատեստավորվեցին, բացառությամբ «Սոցիալական և կլինիկական հոգեբանության» ամբիոնի 2 ասպիրանտների: Դեմ քվեարկեց 1 հոգի:

5. Տպագրության երաշխավորվեցին .

ա/ Է.Ա.Հարությունյան-«Մարդկային կեցության այլակերպումները»-մենագրությունը  
բ/ Ն.Հ.Հարոյան-«Ինքնակարգավորման հիմունքներ» տեսագործական ուսումնական ձեռնարկը /մաս 1/

գ/ Ի.Ա.Ղազարյան –«Կորստի և վշտի հոգեբանություն»-ուսումնական ձեռնարկը

դ/ Հ.Մ.Ավանեսյան, Վ.Ռ.Պապոյան, Ա.Ս.Գալստյան, Դ.Յ.Սարգսյան- «Մասնագիտական ինքնորոշում և ընտրություն»-վերապատրաստման նյութը- /հոգեբանության գիտահետազոտական կենտրոն/:

6. Ս. Պետրոսյանը ներկայացրեց փիլիսոփայության որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրիչների ձևավորման գործընթացը:

7. Թեմաների հաստատում:

- Իրինա Հրանտի Պողոսյան ԺԹ. 00. 01 «Մրցակցային պայմաններում որոշման կայացման արդյունավետ մոդելի կիրառումը պայմանավորող գործոնները»: - գիտական ղեկավար՝ հ. գ. դ. , պրոֆ. Հ. Ավանեսյան
- Ֆ. Կեզել Օղլիեի ԺԹ. 00. 01 «Անձի պաշտպանական համակարգի և էքզիստենցիալ պահանջումների հարաբերակցություն տևական լարվածության պայմաններում»:- գիտական ղեկավար՝ հ. գ. թ. , պրոֆ. Վ. Պապոյան
- Ժեյու Սոնգ – գիտական ղեկավար հ. գ. թ. , դոց. Ն. Խաչատրյան
- Կարակյան Անի - գիտական ղեկավար՝ հ. գ. դ. , պրոֆ. Գ. Շավերդյան
- Չախմախյան Շուշան - գիտական ղեկավար՝ հ. գ. դ. , պրոֆ. Գ. Շավերդյան
- Մովսեսյան Սյունե - գիտական ղեկավար՝ հ. գ. դ. , պրոֆ. Գ. Շավերդյան

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Վ. Պապոյան

